ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

7 սեպտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

125
(2605)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՄ 85

Կոռուպցիայի դեմ պայքարն իր կառավարության հիմնական առաքելությունը հռչակած Նիկոլ Փաշինյանի օրոք անգամ կոռուպցիան դեռ շարունակում է տեղի ունենալ իշխանությունում: Ինչպես ասում էր Փաշինյանը. «Կոռուպցիան սարսափելի դեմքով, պոզով-պոչով կենդանի չէ, երբեմն այն ունի բավականին հաճելի, գրավիչ, երբեմն՝ գայթակղող արտաքին»: Նրան, փաստորեն, գրավել է «բավականին հաճելի, գրավիչ, երբեմն՝ գայթակղող արտաքինը»: 2020 թվականի օգոստոսի 13-ին կառավարության նիստում գործադիրը չզեկուցվող հարցերից մեկով թույլատրել է վարչապետի աշխատակազմին փոփոխություն կատարել «Անտարես»-ի հետ դեռեւս 2019 թվականի դեկտեմբերի 26-ին 21 միլիոն 500 հազար դրամ արժեքով պայմանագրում եւ ծառայությունների մատուցման վերջնաժամկետը երկարաձգել մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Պայմանագիրը կնքվել է «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի տեսլականը հանրությանը ներկայացնելու համար ծավալվող գովազդային արշավը ներկայացնելու համար, որն իրականացնելու է «Անտարես» հրատարակչությունը: Նշենք, որ Արմեն Մարտիրոսյանը, որը հանդիսանում է «Անտարես» ՍՊ ընկերության տնօրենը, բացի ակտիվ հեղափոխական լինելուց, իշխանական ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանի վաղեմի ընկերն ու մտերիմն է: Նա ոչ միայն ակտիվ մասնակցություն է ունեցել ապրիլ-մայիսյան իշխանափոխության գործընթացին, այլ նաեւ մասնակցել է դատարանների շենքերի շրջափակմանը: Եվ չնայած բազմաթիվ քննադատություններին՝ փաստորեն, կոռուպցիոն ռիսկեր պարունակող համագործակցությունը շարունակվում է նաեւ այս տարի, այսինքն՝ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

2016 թվականի հուլիսին ՀՀ պետական եկամուտների կոմիտեն բացահայտել է կեղծ փաստաթղթերի միջոցով պետությանն առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելու դեպք, որում ներգրավված է գործարար, նախկին պատգամավոր, այսօր արդեն «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը: Ինչի՞ մասին է խոսքը. Նիկոլ Փաշինյանի մոտ ընդդիմություն աշխատող Արզաքանցյանին պատկանող ընկերությունը խաբել է Հայաստանի Հանրապետությանը: ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 20-րդ (Հրազդանի) բաժնի կողմից «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲ ընկերությունում իրականացված՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը 2014-ին «Բիլդ Քընստրաքշն» ՍՊԸ-ի հետ կնքել է Կոտայքի մարզի «Լուսաջուր» տարածքի մուտքային տարածքի ճանապարհի շինարարության համար նախագծային եւ աշխատանքային փաստաթղթեր կազմելու վերաբերյալ պայմանագիր: Կողմերը 2015 -ին կազմել են աշխատանքների կատարման ընդունման-հանձնման ակտ՝հաստատելով, որ աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով: Աշխատանքի արժեքը սահմանվել է շուրջ 52 մլն դրամ: ՊԵԿ կողմից հիմնավորվել է, որ նշված ընկերությունների պաշտոնատար անձինք, առանց փաստացի ծառայությունների մատուցման, եկամուտների ու ծախսերի վերաբերյալ ներկայացրել են կեղծ փաստաթղթեր՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի վնաս: Տեղեկացնենք, որ «Պարամաունտ գոլդ մայնինգ» ընկերության բաժնետերերն էին ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանը եւ Տիգրան Արզաքանցյանը: Հիշեցնենք նաեւ, որ նախորդ տարի եւս փաստաթուղթ կեղծելու պատճառով Արզաքանցյանը չկարողացավ մասնակցել ընտրություններին: Նա ՌԴ Մոսկվայի տեղեկատվատեխնոլոգիական համալսարան-Մոսկվայի ճարտարապետաշինարարական ինստիտուտից կեղծ փաստաթուղթ էր բերել, իբրեւ սովորել է այնտեղ 24.02.2018 թվականից մինչեւ 14.06.2019 թվականը, մինչդեռ չի սովորել: Կեղծ փաստաթուղթը նրան օգնել էր գրանցվելու որպես պատգամավորի թեկնածու, սակայն նրա գրանցումը մինչեւ ընտրության օրը մերժվեց: «Ջոջում եմ իմ արածի համար, չեմ ցանկանում ցուցմունք տալ»,-ահա այսպես է դատարանում արդարացել Տիգրան Արզաքանցյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ զինվորական դատախազն այս օրերին պատրաստում է իր ազատման դիմումը: Ավելին՝ մեր աղբյուրները փոխանցում են, որ քաղաքական իշխանությունն այս պաշտոնի համար արդեն թեկնածու ունի, ում մասին առաջիկայում կխոսվի: Վերջինս ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Հայկ Գրիգորյանն է: Ջինդատախազությունը, նկատենք, Գրիգորյանի համար անծանոթ կառույց չէ, քանի որ նա նախկինում աշխատել է Ջինվորական քննչականում ու այնտեղ տարբեր պաշտոններ զբաղեցրել: Հիշեցնենք, որ հուլիսի 5-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունում արշալույսները արդեն խաղաղ չեն: Չնայած Աննա Վարդապետյանը ՀՀ գլխավոր դատախազի աթոռը կզբաղեցնի սեպտեմբերի 15-ից, սակայն մինչ նրա գալը դատախազությունում արդեն որոշ պաշտոնյաներ տրամադրված են հեռանալ: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մինչ Աննա Վարդապետյանի գալը պաշտոնից ազատման դիմումներ կգրեն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Հայկ Ալալանյանը, ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը: Ասել է թե՝նրանք չեն սպասի, որ իրենց ազատեն, այլ իրենք առաջ կընկնեն եւ ազատման դիմում կգրեն: Գլխավոր դատախազի տեղակալներից Արմեն Աֆանդյանի հարցը մի քիչ այլ է. դատախազությունում վստահ են, որ Աննա Վարդապետյանը նրա հետ չի աշխատի, ուստի, այսպես, թե այնպես, նա եւս կազատվի պաշտոնից: Միակ տեղակալը, որը դատախազությունը չի լքի, Գեւորգ Բաղդասարյանն է: Բանն այն է, որ նա թեեւ դատախազ Դավթյանի ընկերն է, բայց նաեւ «Մարտի 1-ի» գործով մեղադրող դատախազներից մեկն է եւ ծառայություն է մատուցել քաղաքական իշխանությանը:



Գլխավոր դատախազությունն ու ԲԴԽ-ն ներքին գզվռտոցի մեջ են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջին շրջանում Գլխավոր դատախազությունը մեկը մյուսի հետեւից դատարան է ուղարկում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասով նախկին պաշտոնատար անձանց գործերը: Դատարանը դատախազության պահանջը վարույթ է ընդունում, որոշում, թե նախկին պաշտոնյաների գույքի վերաբերյալ գործերը Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործեր քննող որ դատավորները պետք է քննեն: Այսինքն՝ գործը հասել է դատարան, սակայն դատարանում նիստերը չեն կայանում: Ինչո՞ւ չեն կայանում նիստերը. պարզաբանման համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Բարձրագույն դատական խորհուրդ, որտեղից մեզ պատասխանեցին. «Գործերը քննեցնելու որեւէ միտում չկա, Հակակոռուպցիոն դատարանը նոր է ձեւավորվել, եւ, հետեւաբար, գործերը վարույթ ընդունելուց հետո սահմանված ժամկետներում կնշանակվեն նաեւ դատական նիստերի օրերը»: Պարզվում է, որ բոլոր գործերը չէ, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարաններն են քննելու: Մի մասը տեղափոխվելու են Հակակոռուպցիոն դատարան, որտեղ նոր նշանակված դատավորները դեռ կնիք ստանալու ու աշխատասենյակ ունենալու հարց են լուծում: Ի՞նչ է ստացվում. դեռեւս 2018 -ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից քանիցս շրջանառված թեզը, թե «թալանը կոպեկ առ կոպեկ» հետ են բերելու, դեռեւս համալիր գործընթացի չի վերածվում, ավելին՝ ձգձգվում ու դանդաղում է: Հիմա էլ կնիք չունեն:

ՈՎ ԷԻՆՔ, ՈՎ ԴԱՐՁԱՆՔ

# «ՓԱՇԻՆՅԱՆԸ «ԽՈՒՐԴՈՒՄ» Է ՀԱՅԱՍՏԱՆԸ». Ա. ԱՇՈՏՅԱՆ

**Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնությամբ՝ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանի ու Իլհամ Ալիևի՝ վերջերս Բրյուսելում տեղի ունեցած հանդիպումը, Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտյանի բնորոշմամբ, Նիկոլ Փաշինյանի՝ Արցախից վերջնականապես հրաժարվելու հիմք է դառնում:**

Ըստ նրա՝ Եվրոպական խորհրդի կողմից տարածած հաղորդագրությունից պարզ է դառնում, որ, փաստորեն, կատարվում է Ադրբեջանի պահանջը, այն է՝ կողմերը սկսում են «խաղաղության համաձայնագրի» նախապատրաստումը, իսկ ԱԳ նախարարները մեկ ամսվա ընթացքում պետք է հանդիպեն, որպեսզի աշխատեն տեքստի նախագծերի վրա:

«Իսկ այդ համաձայնագիրը չի վերաբերելու Արցախի հիմնախնդրին, այսինքն՝ պաշտոնական Երեւանը թողնում է Արցախը՝ այն թողնելով Ռուսաստանի կամ բախտի հույսին, կամ Ադրբեջանին, որպեսզի հոշոտի: Ի դեպ, եթե նախորդ հանդիպման հայտարարության մեջ «Լեռնային Ղարաբաղը» դարձել էր «Ղարաբաղ», ապա հիմա ընդհանրապես որեւէ հիշատակում չկա Արցախի մասին, ինչն ամբողջությամբ կրկին արտահայտում է Բաքվի տեսակետը»,- ասում է Աշոտյանը: ՀՀԿ-ականի համոզմամբ՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների, այսպես կոչված, օրակարգը անջատվում է ղարաբաղյան խնդրից: Ինչ վերաբերում է գերիներին ու այլ խնդիրներին, ապա, ըստ Աշոտյանի, Հայաստանը, ունենալով իրավական բոլոր հիմքերը, այս հարցով չի զբաղվում:

**-Վերջերս ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովը զեկույց է հրապարակել Ադրբեջանի վերաբերյալ, որտեղ ասվում է, թե հայ գերիներին խոշտանգում են, խախտվում են նրանց մարդասիրական իրավունքները, Ադրբեջանը այլատյացություն է դրսեւորում հայերի նկատմամբ: Նորմալ իշխանությունները կվերցնեին այդ զեկույցը, ինչպես նաեւ նախկինում հրապարակված մյուս փաստաթղթերը եւ կդիմեին միջազգային կառույցներին, այլ ոչ թե կներեին Ալիեւին՝ լվանալով հայերի արյունը նրա ձեռքերից:**

Մենք ունենք 303 անհետ կորած, 100-ից ավելի չնույնականացված մարմին, 100-ից ավելի գերի: Մեր երեխաների ճակատագրով ոչ ոք չի զբաղվում:

Այս հարցերը չեն լուծվում, քանի որ Փաշինյանն ի վիճակի չէ դրանք լուծել եւ չի ցանկանում դա անել: Նա կարող էր գոնե ամեն հանդիպման ժամանակ Շառլ Միշելին խնդրել, որ որպես միջնորդ հանդես գա եւ մեր տղաներից 5-10-ին վերադարձնի:

**-Արցախն այժմ ի՞նչ կարգավիճակ ունի: Վերջերս Արցախի անկախության օրն էր, ի՞նչ զգացողություններ ունեիք այդ օրը:**

-Այսօր վստահաբար կարող եմ ասել, որ այն տոնական օրը չէր, որ ունեինք մինչեւ 2020-ը: Այդ օրը ցնծալու կամ ուրախանալու առիթ չունեինք: Ով էինք, ով դարձանք: Ով էինք մինչեւ 2020-ի սեպտեմբերի 27-ը ու ով դարձանք դրանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանի եւ իր կառավարիչների պատճառով պատերազմում պարտություն կրեցինք: Այս հարցն ամեն մի հայ պետք է իրեն տա: Մարդիկ, իհարկե, կարող են մտածել, խորհել, ցավալ, ու, վստահ եմ, որ ազգիս մեծամասնությունը այդպես էլ անում է, պարզապես սեփական ուժին հավատալու պակաս կա: Հայաստանն առանց Նիկոլ Փաշինյանի կառուցելու խնդիր ունենք ներկա պահին: Նիկոլի հեռացումն առաջին անհրաժեշտ քայլն է. բնականաբար, առանց այդ քայլի առաջընթացի հույս ունենալ չի կարելի: Մեր պայքարը, բնականաբար, չպետք է սահմանափակվի Նիկոլի հեռացման հարցով, պետք է սեւեռվենք նաեւ Նիկոլից հետո Հայաստանը վերակառուցելու հարցի վրա, ու այդ վերակառուցման մեջ է մտնում նաեւ Արցախը: Արցախը Հայաստան է, այո՛, բայց Հայաստանի Հանրապետություն չէ, իսկ Հայաստանի Հանրապետության սրիկա ղեկավարն այսօր անգամ չի հիշատակում Արցախի ժողովրդի ինքնորոշման հարցը: Նա Արցախի անկախություն հռչակելը որպես էկզիստենցյալ միջոց է դիտարկում, այդքանով հանդերձ՝ շարունակ «խուրդում» է մեզ, մեր անցյալը, մեր զոհերին, հիշատակը եւ մեր պայքարը: «Խուրդվելու» ենթակա միակ մարդը, սակայն, Նիկոլն է: Նա ինքն իրենով մանրադրամ է. թե որ երկրի մանրադրամ է, կարծում եմ՝ մեր ժողովուրդն ինձանից ավելի լավ գիտի:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ԱՐԴԵՆ 10 ՏԱՐԻ

# ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

**Քարեբախտաբար ծիրանենին ոչուղ չտվեց. ծառը Մայր աթոռ սուրբ Էջմիածնի տանիքից շինարարներն ապամոնտաժեցին ու սկսեցին եկեղեցու վերանորոգման աշխատանքները: 2012-ից են մեկնարկել շինարարական աշխատանքները, ու արդեն տասը տարի վարպետ-շինարարները հիմնովին վերանորոգում են Մայր Տաճարը: Թեեւ փորձում են պահպանել հուշարձանի ամբողջականությունն ու պատմական միջավայրը, երբեմն, սակայն, դա անել չի հաջողվում:**

Ինչքա՞ն գումար է ծախսվել, ու ի՞նչ գումարներ են նվիրաբերվել Մայր Աթոռի հիմնովին ու հիմնարար վերանորոգման համար. կաթողիկոսարանի լուսարարապետ Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը ո՛չ թվեր, ո՛չ էլ տեղեկություններ առայժմ չի տրամադրում:

Թեեւ բարձրաստիճան հոգեւորականները համաձայնում են, որ Մայր տաճարի օծման ու բացման ժամկետները ձգձգվել են, բայց եւ հստակ ու կոնկրետ չեն պատասխանում՝ հավատավորների առջեւ, ի վերջո, իր դռները եկեղեցին երբ կբացի:

Թեեւ ճարտարապետն ասում է, որ շինաշխատանքները կարելի է ավարտված համարել, բայց Մուշեղ սրբազանը Տաճարի դռները բացելու համար շատ ավելի մեծ ժամանակահատված է նախանշում: Մայր աթոռ սուրբ Էջմիածնի օծման արարողության ձգձգումն իրականում կարող է նաեւ այլ՝ հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների՝ լարված հարաբերություններ ունենալու հետ կապված լինել: Հայաստանի ամբողջ պատմության մեջ գուցե առաջին անգամ երկրի հոգեւոր ու քաղաքական ղեկավարները միմյանց հետ չեն չփվում, չեն հաղորդակցվում: Անգամ պետական ու հոգեւոր նշանակության կարեւորագույն տոներին կաթողիկոսարանն ու գործադիրը, ընդունված կարգի համաձայն, մեկը մյուսին հրավեր չեն ուղարկում ու առանձին-առանձին են մասնակցում հանդիսավոր այս կամ այն միջոցառմանը:

## ԵԹԵ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՉԱՊԱՀՈՎԵՆ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Զարուհի Բաթոյանն առաջարկում է տուգանել այն առեւտրի ու հանրային սննդի օբյեկտներին, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն չեն ապահովի:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատգամավորը համապատասխան փոփոխությունը ցանկանում է ամրագրել ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում:

«Առեւտրի եւ հանրային սննդի օբյեկտներում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության նորմերը չպահպանելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 250-300-ապատիկի չափով:

Տուգանքի նշանակումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն հոդվածի 48-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ չվերացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 550- 850-ապատիկի չափով»,- ասված է նախագծի մեջ:

Նշենք, որ նախագիծը խորհրդարանի օրակարգում «դեռեւս չընդգրկվածների» բաժնում է ներառված:

## ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետական միջոցներով հատուկ տուփով, հայկական զարդանախշերով մեկ շարֆ է գնել: ArmLur.am-ը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ մեկ շարֆի համար նախարարությունը վճարել է 40 հազար դրամ: Շարֆը գնվել է «Մերգերյան կարպետ» ընկերությունից հուլիս ամսին: Բացի այս, մեզ հայտնի դարձավ, որ էկոնոմիկայի նախարարությունը 3 հատ անուշեղեն է գնել՝ վճարելով ընդհանուր 103 հազար 500 դրամ: Նախարարության գնումներն այսքանով չեն ավարտվում. Վահան Քերոբյանի ղեկավարած նախարարությունը երեւանյան սուպերմարկետներից մեկից 783 հազար դրամի չափով գնում է կատարել: Մասնավորապես, գնվել է 4 հատ գինի՝ ընդհանուր 62000 դրամով, 35 հատ խոզապուխտով սենդվիչ՝ 31 հազար դրամով, 10 տարեկան մեկ կոնյակ՝ 24 հազար 700 դրամով, 20 տարեկան կոնյակ՝ 52 հազար 500 դրամով, 36 հատ օղի՝ 522 հազար դրամով: Նաեւ գնվել են նվերների տոպրակներ: Ենթադրվում է, որ նախարարությունը ալկոհոլային խմիչքը գնել է նվիրելու նպատակով: Թե ում են դրանք նվիրվելու, փաստաթղթում նշված չէ:

## ՀՐԱՎԵՐ՝ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Armlur.am-ը տեղեկացավ, որ ՍԴ անդամ Հրայր Թովմասյանին հրավիրել են Գլխավոր դատախազություն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով:

«Ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 16-րդ եւ 17-րդ հոդվածներով՝ ծանուցում եմ, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Ձեզ պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն (ք. Երեւան, Տիգրան Մեծի պողոտա, 50)՝ ծանոթանալու ուսումնասիրության նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր:

Ըստ այդմ, հայտնում եմ, որ անհրաժեշտ է ներկայանալ սույն թվականի սեպտեմբերի 07-ին՝ ժամը 09:30-ին, իսկ նշված օրը եւ ժամին ներկայանալու անհնարինության դեպքում օրը եւ ժամը համաձայնեցնելու նպատակով հարկավոր է նախապես զանգահարել 010-511-662 հեռախոսահամարին:

## ՊԱՅԹՅՈՒՆԻՑ 24 ՕՐ ԱՆՑ

«Սուրմալու»-ի ողբերգական պայթյունից անցել է 24 օր, եւ մինչ օրս քրեական վարույթով մեղադրյալի աթոռին են հայտնվել 4 անձ:

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի գործով ձերբակալվածներից մեկը առեւտրի կենտրոնի փոխտնօրենն է, մյուսը՝ պայթած տարածքի վարձակալը, իսկ մյուս երկու ձերբակալվածները պահեստը շահագործողներն են եղել, սակայն ավելի ուշ փոխտնօրենը ազատ արձակվեց:

«Սուրմալու»-ի փոխտնօրենին ու վարձակալներից մեկին մեղադրանք է առաջադրվել հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք: Մյուս երկու անձինք մեղադրվում են անզգուշությամբ երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելու համար:

16 մարդու կյանք խլած դեպքից ավելի քան 24 օր անց քրեական գործում դեռեւս կարգավիճակ չունի «Սուրմալու»-ի սեփականատերը:

Քրեական գործով ArmLur.am-ին որոշակի հանգամանքներ են հայտնի դարձել. այսօրվա դրությամբ ողբերգական դեպքից 24 օր անց հարցաքննվել է 110 քաղաքացի, իսկ, ահա, 85 անձ ճանաչվել է տուժող:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

# ՁԵՎԱՎՈՐՎԵԼ Է ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները վերհանելու, դրանց շուրջ քննարկումներ կազմակերպելու եւ միասնական լուծումներ առաջարկելու նպատակով ձեւավորվել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից Քաղաքաշինական խորհուրդ:**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հայտնում են, որ, կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի գլխավորությամբ, օրերս կայացել է խորհրդի անդրանիկ նիստը: Ավելի քան 30 անդամից բաղկացած խորհրդի կազմում ընդգրկված են հեղինակավոր, փորձառու ճարտարապետներ, ինժեներներ, բնագավառի այլ մասնագետներ, ինչպես նաեւ Ճարտարապետների պալատի եւ Հայաստանի շինարարների միության ղեկավարները: Խորհրդի մասնագիտական քննարկմանն են դրվելու նաեւ քաղաքաշինական եւ ճարտարապետական առումով կարեւորություն ներկայացնող քաղաքաշինական օբյեկտների, ճարտարապետական համալիրների ու կառուցապատման նախագծերը:

Կոմիտեի ղեկավարը ներկայացրել է համագործակցության նման ձեւաչափի ստեղծման նպատակը եւ խորհրդի աշխատանքների կազմակերպման կարգը: Շնորհակալություն հայտնելով ներկաներին կարեւոր նախաձեռնությանը մասնակից լինելու համար՝ նա ընդգծել է մասնագիտական հանրության անմիջական մասնակցությամբ ոլորտի հիմնախնդիրների լուծման առավել արդյունավետ տարբերակներ վերհանելու կարեւորությունը:

Առաջին նիստի ընթացքում, քաղաքաշինական խնդիրների համատեքստում, անդրադարձ է կատարվել մայրաքաղաքի կենտրոնական հատվածներում կառուցապատման կանոնակարգման հարցին: Առաջարկներն ամբողջացնելու նպատակով որոշվել է ժամանակ տրամադրել ներկաներին դիտարկումները գրավոր ներկայացնելու համար:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը երեկ ընդունել է IBM ընկերության էլեկտրոնային նախագծման ավտոմատացման (EDA) խմբի փոխնախագահ, դոկտոր Լեոն Սթոկին, որն արժանացել է Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի: Նախագահ Խաչատուրյանն ընդգծել է, որ այսօրինակ մրցանակաբաշխությունները նաեւ լավ հնարավորություն են ընձեռում համաշխարհային ազդեցություն ունեցող ընկերությունների ներկայացուցիչներին այցելել Հայաստան, ծանոթանալ հայ գիտնականների հետ, որոշ առումով նաեւ նպաստում են բարձր տեխնոլոգիաների ոլորտում Խորհրդային Հայաստանի ունեցած լավագույն ավանդույթների վերականգնմանը:

Նախատեսվում է նաեւ ՀՀ վարչապետի եւ ՌԴ նախագահի հանդիպումը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 6-9-ն աշխատանքային այցով կմեկնի Ռուսաստանի Դաշնություն:

Կառավարության ղեկավարը Վլադիվոստոկում կմասնակցի «Բազմաբեւեռ աշխարհի ճանապարհին» թեմայով Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի լիագումար նստաշրջանին, որը տեղի կունենա Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ այլ պետությունների ղեկավարների մասնակցությամբ. ասված է Հայաստանի վարչապետի աշխատակազմի լրատվականի հաղորդագրությունում:

## ԳԱԱ ՏՆՕՐԵՆՆԵՐ ԸՆՏՐՎԵՑԻՆ

Սեպտեմբերի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը:

Մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ Մանվելյանի անվան ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց տեխնիկական գիտությունների թեկնածու Կարեն Գրիգորյանը:

Մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Տիգրան Զաքարյանը:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԻ

Սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության պետական տոնի՝ Անկախության օրվա առթիվ ՌԴ դեսպանության հյուպատոսական բաժնում քաղաքացիների ընդունելություն չի իրականացվի: Այս մասին տեղեկանում են ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանությունից:

ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

# ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՀԻՄՔ Է

**Տեւական ժամանակ է, ինչ ՀՀ ԱԱԾ ռազմական հակահետախուզության դաշտոնական հաղորդագրություն է տարածվում, որ հայերեն լեզվին ազատորեն տիրապետող օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչները ծանոթություններ են հաստատել ՀՀ զինված ուժերում տարբեր դաշտոններ զբաղեցնող անձանց հետ՝ հնարավորություն ունենալով համացանցային ծանոթությունները վերածել մտերիմ հարաբերությունների, իսկ այնուհետ՝ նաեւ առաջարկել գումարի դիմաց համագործակցել իրենց հետ եւ տրամադրել ռազմական բնագավառին վերաբերող տեղեկություններ, մասնավորապես՝ ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասերի տեղակայման վայրերի, անձնակազմի, զենքի, զինամթերքի, զինտեխնիկայի քանակի եւ տեսակի, զորամասերի եւ դրանց հրամանատարական կազմի, դաշտոնական շրջանների, ինժեներական կառույցների, սարքավորումների եւ այլնի վերաբերյալ:**

Նշված եղանակով լրտեսական գործունեություն իրականացրած անձինք գործակալական ցանցում ներգրավել են շուրջ երկու տասնյակ ՀՀ քաղաքացիների, որոնք ՀՀ զինված ուժերում զբաղեցրել են տարբեր պաշտոններ եւ ի պաշտոնե հնարավորություն են ունեցել առնչվելու պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ փաստաթղթերի հետ:

Հիշյալ զինծառայողները տվել են իրենց համաձայնությունը եւ գումարի դիմաց բջջային տարբեր հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին մաս-մաս փոխանցել են ծառայության բերումով իրենց հասանելի դարձած կամ օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցիչների պահանջով հավաքած ռազմական կամ այլ բնույթի տեղեկությունները, ի վնաս Հայաստանի Հանրապետության կատարել դավաճանական գործողություններ:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ այս արարքի համար Արթուր Սարդարյանը Ազգային անվտանգության ծառայության կողմից 2021 թվականին պետական դավաճանության մեղադրանքով կալանավորվել էր, եւ նրա դեմ հարուցված քրեական գործը ուղարկվել էր դատարան: Դատարանը, հաշվի առնելով պետական գաղտնիքի գործոնը, դատական տեղեկատվական համակարգում փակել է քրեական գործը, եւ այն հասանելի չէ ոչ ոքի: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ պետական դավաճանության համար մեղադրվող Արթուր Սարդարյանն արդարացվել է:

Ստացվում է, որ նախաքննական մարմինը մեծ աղմուկ է բարձրացնում, թե պետական դավաճանության արդյունքում զինվորականները թշնամուն տեղեկություններ են տվել, սակայն ամիսներ անց հասկանում է, որ անձը չի արել այդ արարքը. նրա վրայից մեղադրանքը հանվում է, եւ իրավիճակից դուրս գալու համար այլ մեղադրանք են առաջադրում:

Փաստաբան Վահագն Քեշիշյանը նշում է՝ իր պաշտպանյալն արդարացվել է եւ պետական դավաճանություն չի արել, սակայն ներկայումս խոշտանգման է ենթարկվում:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՄԱՀԱՑԵԼ Է ԿՐԱԿՈՑԻՑ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 15-րդ կետերով, նախաձեռնվել է քրեական վարույթ՝ պարտադիր ժամկետային զինծառայող Արման Գագիկի Սարգսյանի սպանության դեպքի առթիվ: Նախնական տեղեկություններով՝ 2022թ. սեպտեմբերի 6-ին՝ ժամը 22:15-ի սահմաններում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողը կրակոց է արձակել ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում գտնվող մարտական դիրքի ուղղությամբ, ինչի արդյունքում նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Արման Գագիկի Սարգսյանը գլխի շրջանում ստացել է մահացու հրազենային վնասվածք:

## ՊԱՐՔՎԵԼ Է ՊԱՏՃԱՌԸ

Օգոստոսի 31-ին՝ ժամը 13.30-ին, ԱԻՆ հրշեջ փրկարարական ծառայությունից ոստիկանության Իջեւանի բաժին հաղորդում էր ստացվել, որ Իջեւան համայնքի «Գինու գործարանի» հարակից տարածքում չոր խոտածածկ տարածք է այրվում: Իջեւանի ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում սեպտեմբերի 5-ին պարզվել է, որ օգոստոսի 31-ին՝ ժամը 09.00-ի սահմաններում, Երեւանյան փողոցի 73-ամյա բնակիչը տան հետնամասում վառել է փայտածուխի պատրաստման տարայի մեջ եղած փայտը, ինչի հետեւանքով հրդեհ է առաջացել, որը տարածվել դեպի հարակից անտառ: 73-ամյա տղամարդը փորձել է հանգցնել բռնկված կրակը, սակայն չի կարողացել, ինչից հետո զանգել է 911 ծառայություն: Այրվել է մոտ 12 հեկտար տարածք:

## ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ձեռնարկվում են անհետաձգելի միջոցառումներ՝ Վանաձոր քաղաքի 32-ամյա բնակչի սպանության դեպքը բացահայտելու ուղղությամբ: Վանաձոր քաղաքի 32-ամյա բնակչի դին՝ «ձախ թիակի շրջանի կտրած պատռած վերք» ախտորոշմամբ, Վանաձորի բժշկական կենտրոն տեղափոխվելու վերաբերյալ ահազանգը ստացվել է 2022թ. սեպտեմբերի 6-ին՝ ժամը 00:30-ին: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

Ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել են 32-ամյա տղամարդու՝ կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածք ստանալու մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ դեպքի վայրը, շարժառիթը, ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, որը նույն քաղաքի 31-ամյա բնակիչ է: Նախնական տվյալներով՝ դեպքի օրը՝ 2022 թվականի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 22:45-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասի Ուկրաինական պողոտայում գտնվող շենքերից մեկի բակում անձնական հարցերի շուրջ վիճաբանություն է տեղի ունեցել համաքաղաքացի նշված անձանց միջեւ, որի ընթացքում 31-ամյա տղամարդը սուր կտրող-ծակող գործիքով հարվածել է 32-ամյա համաքաղաքացու ձախ թիակի հատվածին ու դիմել փախուստի:

Նախաքննության ընթացքում կատարվել են քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողություններ՝ դեպքի վայրի եւ դիակի զննություններ, հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ ենթադրյալ հանցագործություն կատարած 31-ամյա տղամարդուն, ինչպես նաեւ՝ հանցագործության գործիքը հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

## ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի որդին՝ ԱԺ նախկին պատգամավոր Արգամ Աբրահամյանը, երեկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով» ներկայացել է Գլխավոր դատախազություն:

Գլխավոր դատախազությունից հաստատեցին մեր տեղեկությունը՝ նշելով. «Ներկայացել է Հ. Աբրահամյանի որդին՝ իր մասով. մյուսները դեռեւս անձամբ կամ ի դեմս իրենց ներկայացուցիչների դեռ չեն ներկայացել: Սպասվում է, որ առաջիկայում կներկայանան»:

Նշենք, որ ՀՀ գլավոր դատախազությունը ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին հրավիրել էր Գլխավոր դատախազություն: Հիմքում նշվում է. «Ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 16-րդ եւ 17-րդ հոդվածներով՝ ծանուցում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Ձեզ պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն (ք.Երեւան, Տիգրան Մեծ պ. 50)՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 10-ի N 2044-Ն որոշման:

Միաժամանակ, հայտնում եմ, որ ներկայանալ կարող եք 2022թ. սեպտեմբերի 5-ին՝ ժամը 10:00-ին, իսկ նշված օրը եւ ժամին ներկայանալու անհնարինության դեպքում հարկավոր է օրը եւ ժամը համաձայնեցնելու նպատակով նախապես զանգահարել 010-511-649 հեռախոսահամարին»:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԴԵՊՔԵՐԻ ԱՃ

Այս տարվա առաջին 7 ամիսներին Հայաստանում գրանցվել է 20963 հանցագործության դեպք, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 5237-ով կամ 33 տոկոսով: Վիճակագրության կոմիտեից տեղեկանում ենք, որ մասնավորապես անձի դեմ ուղղված հանցագործություններն աճել են 1562-ով կամ 70 տոկոսով: Սպանությունները 33-ից դարձել են 163, աճը՝ շուրջ 5 անգամ:

Հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները աճել են 2669-ով կամ 81 տոկոսով: Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն աճել են 444-ով կամ 5,5 տոկոսով: Պետական իշխանության, ծառայության եւ կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններն աճել են 234-ով կամ շուրջ 16 տոկոսով:

Հանցագործությունների ընդհանուր քանակից կոռուպցիոն բնույթի հանցագործությունները նվազել են 71-ով կամ 13 տոկոսով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ԽՈՒՃՈՒՃ ԹՎԵՐ

2018թ. դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրություններում Տավուշի մարզն ընդգրկող թիվ 13 ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 108 773: 2021թ. հունիսի 20-ին կայացած խորհրդարանական ընտրություններում Տավուշի մարզի ընտրողների ընդհանոր թիվը կազմել է 109 հազար 690: 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ընտրողների թիվը եղել 18374, 2021թ. նոյեմբերի 14-ին կայացած Իջեւան խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ընտրողների թիվը եղել է 33090, 2021թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած Նոյեմբերյան խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ընտրողների թիվը եղել է 24133: 2022թ. սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ընտրողների թիվը 22454 է, այսինքն՝ մարզի բոլոր՝ 4 խոշոր համայնքների ավագանու ընտրություններում ընտրողների ընդհանուր թիվը կազմում է 98051: Ներկայացված բոլոր թվերը պաշտոնական են: 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ, ըստ Վիճակագրության պետական կոմիտեի, Տավուշի մարզի բնակչությունը կազմել է 119 հազար 500: Վիճակագրության պետական կոմիտեն բնակչության ընդհանուր թվի մեջ 0-18 տարեկանների հաշվարկ չի կատարում, սակայն նույն այդ կոմիտեի տվյալներով՝ 2021 թվականի դրությամբ Տավուշի մարզի բնակիչության մեջ 0-19 տարեկանների թիվը 31 հազար 155 է: Որպեսզի իրավիճակի մասին ավելի ճշգրիտ պատկերացում կազմվի, նշեմ, որ Վիճակագրության պետական կոմիտեն հաշվառում է մարզի մշտական բնակչությունը, այսինքն՝ Տավուշի մարզի այն բնակիչներին, որոնք գտնվում են մարզում կամ մարզից բացակա են ոչ ավել, քան մեկ տարի եւ ավելի երկար ժամկետով, իսկ ընտրողների ցուցակում ընդգրկված են նաեւ մարզում հաշվառված, սակայն մեկ տարուց ավելի երկար ժամկետով մարզից բացակայացող քաղաքացիներ:

## ԾԻԾԱՂ Է ՊԱՐԳԵՎԵԼ

Սեպտեմբերի 25-ին կկայանան Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրությունները: ՔՊ կուսակցության ավագանու թեկնածուների 58-հոգանոց ցուցակը գլխավորում է Բերդի միասնական սոցիալական ծառայության տնօրեն Վահրամ Սուքիասյանը, որը «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է. «Մենք մեր գործերով, հոգատարությամբ ու քայլերով պետք է վերադարձնենք մարդկանց ժպիտը եւ մեծ հույսերով լցնենք նրանց կյանքն ապագայի նկատմամբ»: Համացանցում արձագանքել են Վահրամ Սուքիասյանի գրառմանը՝ գրելով, որ նա արդեն ոչ թե ժպիտ, այլ ծիծաղ է պարգեւել՝ նկատի ունենալով «Ֆեյսբուք»-ի նրա էջում հրապարակված, օգտատերերի կողմից տարածված լուսանկարները: Այդ լուսանկարներում խոշորամարմին Վ. Սուքիասյանը պատկերված է երկու գեր խոզերի հետ, մի այլ լուսանկարում նա «Հայնեկեն» ֆիրմայի գարեջրի մեծ շշով է:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

«18+» ԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆ ՈՒ ՏԵՂԱՑԻՆԵՐՆ ԱՀԱՋԱՆԳՈՒՄ ԵՆ

**Համաշխարհային մեծության գիտնական Պարիս Հերունու մտքով 1987-ին, երբ շահագործման էր հանձնվում աշխարհում հավակնոտ ու բացառիկ ռադիոօպտիկական դիտակը, դժվար թե անցներ, որ դրանից 35 տարի անց Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի Արագածի գիտական կենտրոնի համալիրի տարածքում ղեսական մարմինների թողտվությամբ մասնավոր որեւէ ընկերություն կարող է երաժշտական միջոցառում իրականացնել:**

Սեպտեմբերի 10-12-ը գիտական միջավայրում «Արմատ» ՀԿ-ն երաժշտական փառատոն է անցկացնելու: Թե իրականում ինչ է լինելու այդ փառատոնի ժամանակ, ինչ երաժշտություն է հնչելու, ինչ են վաճառելու ու պրոպագանդելու, կազմակերպիչների ներկայացրածով դժվար է հասկանալ: Առավել տարօրինակը փառատոնի համար նախատեսված մասնակցության տոմսի վրա նշված «18+» ընդգծումն ու դիտակի հայելու մեջ լուսային շոու իրականացնելու հանգամանքներն են:

Տեղացիներն էլ ահազանգում են, որ Պարիս Հերունու չավարտված արեւային կայանից, որը պատմամշակութային նորահայտ հուշարձանի կարգավիճակ ունի, մասնատվում են երկաթյա կոնստրուկցիաներ, որոնք, ըստ ՀԿ-ի աշխատակիցների, փառատոնի ժամանակ բարի ու բեմի հենասյուներ են ծառայելու:

Թե՛ գիտնականների, թե՛ տեղացիների մտահոգությունները նաեւ տեղի հոգեւոր հովվին են մտորելու տեղիք տալիս: Թեմայի վերաբերյալ զրուցել ենք Տեղերի հովվության հոգեւոր հովիվ Տեր Մխիթար քահանա Ահարոնյանի հետ:

**-Որպես տարածաշրջանի հոգեւոր հովիվ՝ վերոնշյալ փառատոնի մասով Դուք ի՞նչ անհանգստություններ ունեք, որովհետեւ գյուղացիներն ու գիտնականները մեզ հետ զրույցում նշում են՝ չի բացառվում, որ մշակութային փառատոնի անվան տակ իրականում տարատեսակ այլ բնույթի հավաքներ անցկացվեն:**

-Անհանգստություն, այո, իրականում կա, ու ես էլ Ձեզ նման գյուղի ժողովրդի հետ շփումների զրույցների ժամանակ իմացա, որ Ձեր կողմից նշված ընկերությունը գիտական կենտրոնի տարածքում նախատեսում է միջոցառումներ անցկացնել: Մինչեւ փառատոնի մեկնարկն աստղադիտարանի տարածքում, փաստորեն, արդեն իսկ սկսել են նախապատրաստական աշխատանքեր իրականացվել, ինչի շրջանակներում այստեղ տարբեր ազգերի ներկայացուցիչներ են ժամանել:

Վերջերս, օրինակ, գիշերվա ժամին ու առավոտյան վանքի բակում տեսել եմ մեր ազգային բնութագրումներին ոչ հարիր, ոչ պատշաճ ներկայանալի տեսքով երիտասարդների: Մեր աչքի համար տարօրինակ արտաքինով այդ մարդիկ, որ հիմնականում օտարերկրացիներ են, ազատորեն շրջում են գյուղի տարածքում, ու տեղաբնակների մոտ անհանգստություն կա, որ գյուղի երիտասարդությունն ակամա այդ շրջանակների ազդեցությանը կարող է տրվել:

Ըստ թափառող զրույցների՝ այդ մարդիկ այլեւայլ հարանվանությունների, գաղափարախոսությունների կամ խմբակերի են պատկանում: Մեր ազգին ոչ միայն հարիր չէ, այլ նաեւ մեր աչքին անսովոր է նմանատիպ հագուկապով, կեցվածքով մարդկանց տեսնել շրջապատում: Համաշխարհային մեծության գիտնական Պարիս Հերունու ջանքերով կառուցված ու շահագործման հանձնված ռադիոօպտիկական աստղադիտակն ու հարակից տարածքը՝ այլ շինություններով հանդերձ, որը նաեւ պատմամշակութային է, եթե գիտությամբ զբաղվող ընկերության տրված լիներ, հավատացնում եմ՝ գյուղացիների մոտ նման անհանգստություն չէր լինի:

**-Թե՛ Ձեր, թե՛ գյուղացիների հիմնական մտահոգությունը ո՞րն է, որովհետեւ կազմակերպիչներն էլ կարող են ասել, թե գյուղ ֆինանսական հոսքեր են բերում:**

-Գյուղացու անհանգստությունն այն է, որ երիտասարդներն ու ոչ միայն, նման փառատոնների մասնակցելով, տարատեսակ հոսքերի մեջ կարող են ներգրավվել: Օրգով համայնքը բավականին փոքր համայնք է, գյուղն իր ավանդույթներով է ապրում, իր կոլորիտը, բառ ու բանն ունի: Թե՛ գյուղացիների, թե՛ իմ մտահոգությունն այն է, որ որեւէ միջոցառում, որ կազմակերպվում է մեր հովվության տարածքում, որեւէ ձեւով չխաթարի մեր ազգային նկարագիրը, հավատքի հիմնասյունը, հայրենի արժեքների նկատմամբ ունեցած հավատն ու նվիրումը եւ տարատեսակ, բազմաբնույթ ու օտարածին գաղափարախոսություններով չմասնատի մեր օրինյալ ազգի միասնականությունը:

**-Կազմակերպիչները Ձեզ հետ չե՞ն հանդիպել, եկեղեցի չե՞ն եկել:**

-Ոչ, ինձ հետ չեն հանդիպել, եկեղեցի չեն եկել: Մի խումբ երիտասարդներ են միայն գիշերը ժամը 12-ին վանք եկել (գիշեր է լինում, որ այստեղ եմ մնում): Բավական տարօրինակ արտաքին ունեին՝ քթին ականջող դրած, երկար եղունգներով, մի խոսքով՝ մեր աչքին անսովոր արտաքինով էին, բայց հոգուս մեղք չվերցնեմ ու հստակ չասեմ, թե նրանք այդ միջոցառման հետ ինչոր կապ ունեն:

Այս առնչությամբ հանդիպել եմ խնդրով մտահոգ անձանց, զորօրինակ՝ պատմաբան, հնագետ Ջոհրապ Մուղդուսյանին եւ Պարիս Հերունու դուստր Նանա Հերունուն, ինչպես նաեւ ոլորտի այլ մասնագետների. բոլորն էլ անհանգստացած են, թե գիտական միջավայրում ինչ համերգ կամ փառատոն է լինելու: Տարօրինակ է նաեւ այն, որ նշյալ փառատոնը նախատեսված է իրականացնել այն օրերին, երբ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին մեծ շուքով տոնելու է 5 տաղավար տոներից վերջինը՝ հայ ժողովրդի կողմից սիրված Խաչվերացի տոնը: Հարց է առաջանում՝ ինչու հենց այս օրը: Գիտաֆիզիկայի կենտրոնը Տեղերի Սուրբ Աստվածածին վանքից ընդամենը մի ձորակով է առանձնացված. պարզ է, չէ՞, որ համերգի ձայները ոչ միայն եկեղեցում մատուցվող պատարագի ձայնն են խլացնելու, այլեւ խանգարելու են աղոթող հավատացյալներին:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նման միջոցառումներ կազմակերպելուց առաջ մանրակրկիտ ուսումնասիրել ծրագիրը, նպատակները եւ պատշաճ կերպով տեղեկացնել համայնքի ղեկավարությանն ու ժողովրդին, որպեսզի մեր ժողովուրդը եւս անհանգստություն չապրի այս ծանր իրավիճակներում:

Մեր պահանջն է, որ պատկան մարմինները միջոցներ ձեռնարկեն, որպեսզի հավատացյալ ժողովրդի եւ համայնքի բնականոն կյանքը, անդորրն ու ազգային արժեքների նշաձողը մնա իր բարձր մակարդակին:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐՐՈՐԴ ՏԵՂՈՒՄ Է

**2022-ի սկզբից Ռուսաստանից Հայաստան է մեկնել 49 հազար մարդ: Ռուսաստանից մարդկանց մեծ մասը մեկնել է Ուկրաինա (79.6 հազար) եւ Տաջիկստան (58.4 հազար): Հայաստանը երրորդ տեղում է:**

2022-ի առաջին կիսամյակում Ռուսաստանից արտասահման է մեկնել 419 հազար մարդ. հայտնում է ՌԲԿ-ն՝ վկայակոչելով Պետական ??վիճակագրական դաշնային ծառայության (Ռոսստատ) տվյալները: Դա երկու անգամ ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, երբ երկիրը 202 հազար մարդ էր լքել:

Ընդ որում, եթե 2021-ի առաջին կիսամյակում Ռուսաստանում միգրացիայի աճ է գրանցվել, որը կազմել է 114.2 հազար մարդ, ապա այս տարվա առաջին վեց ամիսներին միգրացիայի նվազում է գրանցվել՝ 96.7 հազար մարդ:

Մասնավորապես, «Ռոսստատ»-ի տվյալներով, Ռուսաստանից ԱՊՀ երկրներ է մեկնել 368 հազար մարդ, 294 հազարը վերադարձել է: Միգրացիոն արտահոսքը կազմել է 73 հազար մարդ՝ 2021-ի 111 հազար աճի համեմատ: 50 հազարից մի փոքր ավել մարդ մեկնել է ոչ ԱՊՀ երկրներ, իսկ 27 հազարը վերադարձել է՝ մինուս 23 հազար մարդ՝ նախորդ տարվա 2.5 հազար աճի համեմատ:

«Ռուսաստանի Դաշնությունից մեկնածների թիվն աճել է 216.5 հազար մարդով կամ 2.1 անգամ, ինչպես ԱՊՀ անդամ երկրներ արտագաղթածների հաշվին՝ 189 հազար մարդով կամ 2.1 անգամ, այնպես էլ ԱՊՀ անդամ չհանդիսացող երկրներ մեկնածների հաշվին՝ 27.6 հազար մարդով կամ 2.2 անգամ»,- նշել են գերատեսչությունում:

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 27-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ Է

## ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի վիճակագրական կոմիտեն սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի շուկայում օգոստոսին, հուլիսի համեմատ, գնանկում է արձանագրել:

Բայց չնայած սրան՝ մակարոնեղենի գներն են աճել 1.1 տոկոսով: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ մեկ տարվա ընթացքում մակարոնեղենի գները բարձրացել են 32.7 %-ով: Թանկացել է նաեւ ձուն 4.8 տոկոսով: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ ձվի գինը օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, նվազել է 15.2 %-ով, իսկ այս տարվա հուլիսի համեմատ՝ բարձրացել 4.8 տոկոսով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ բանջարեղենի շուկայում եւս գնաճ է արձանագրվել 0.2 տոկոսով, փոխարենը լոբին, ոսպը, բրինձը էժանացել են:

Օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, ալյուրի գների մակարդակն աճել է 16.6 %-ով, իսկ հուլիսի համեմատ՝ արձանագրվել է 1.2 տոկոս գնանկում: Շաքարավազի շուկայում մեկ տարվա ընթացքում արձանագրվել է 7.4 % գնաճ, իսկ այս հուլիսի համեմատ՝ այն էժանացել է 1.6 տոկոսով: Ձեթի գինը նվազել է 6.6 տոկոսով:

Հայաստանում ոչ պարենային ապրանքները թանկացել են: ArmLur.am-ը տեղեկացավ, որ օգոստոսին, հուլիսի համեմատ, ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.4 տոկոս գնաճ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ՝ 8.2 տոկոս: Հանրապետության 9 քաղաքներում օգոստոսին, հուլիսի համեմատ, գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.8 տոկոս գնաճ, իսկ 2-ում՝ 0.1 տոկոս գնանկում: Երեւանում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.4 տոկոսով:

Բենզինի շուկայում է Վիճակագրական կոմիտեն գնանկում արձանագրել. ըստ պաշտոնական աղբյուրի՝ օգոստոսին, հուլիսի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է բենզինի 2.5, դիզելային վառելիքի՝ 2.1 տոկոս գնանկում: Մեկ տարվա ընթացքում հակառակ պատկերն է. բենզինի եւ դիզելային վառելիքի գներն աճել են. բենզինը թանկացել է 6.5, դիզելային վառելիքը՝ 37.9 տոկոսով:

Թեւ պաշտոնական աղբյուրը հայտարարում է, որ բենզինի շուկայում գնանկում է, այնուամենայնիվ արձանագրենք, որ բենզինի մեկ լիտրի արժեքը սկսում է 500 դրամից եւ տատանվում է 520 դրամի սահմաններում: Սա միայն Ռեգուլյար տեսակի բենզինի արժեքն է, բայց, օրինակ, Սուպեր տեսակի բենզինի գինը կազմում է 850 դրամ:

*ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ*

ՍՏԱՑԵԼ ԵՆ

# ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ՝ 40 ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

**Սփյուռքահայ 40 մասնագետներ ավարտել են Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում աշխատանքը եւ ստացել վկայականներ: Նրանք արդեն մեկ տարի հայրենիքում էին Հայաստանի պետական համակարգում սփյուռքահայ մասնագետների ներգրավման «ԻԳործ» ծրագրով: Ծրագրի հանդիսավոր փակմանը մասնակցում էին ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, պետական պատգամավորներ, ծրագրի մասնակիցների գործընկերները եւ այլք:**

Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակից հայտնում են, որ 14 երկրներից ժամանած հայ մասնագետներն աշխատել են Հայաստանի Հանրապետության 19 պետական կառույցներում:

«ԻԳործ»-ի մասնակիցները ծրագրեր են իրականացրել հետեւյալ ոլորտներում՝ գիտություն, էկոնոմիկա եւ ներդրումային քաղաքականություն, շրջակա միջավայրի պահպանություն, սոցիալական ապահովություն, հայրենադարձության աջակցություն եւ խթանում, սփյուռքի պարտատոմսերի պահանջարկի ուսումնասիրություն, թվային տնտեսության զարգացում եւ կրիպտոարժույթի վերաբերյալ հետազոտություն, հանրային ծառայությունների թվայնացում, ճանապարհային անվտանգությանն առնչվող ծրագրեր, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, կրթական համակարգ, առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, մարդու իրավունքների պաշտպանություն, կինոոլորտի զարգացում եւ այլն:

Գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանն իր խոսքում կարեւորեց ծրագրի բաղադրիչները՝ մասնագիտական հայրենադարձություն, պետական համակարգում սփյուռքի ներգրավվածության ապահովում եւ ուղեղների ներհոսք: «Միայն այն հանգամանքը, որ արդեն երկու տարի «ԻԳործ»-ականների 70 տոկոսից ավելին մնում է Հայաստանում, խոսում է ծրագրի արդյունավետության մասին:

Նրանց մի մասը մնում է պետական համակարգում, մի մասն էլ աշխատանքի է անցնում մասնավոր հատվածում»,- նշեց Զարեհ Սինանյանը:

Այնուհետ ելույթներ ունեցան ծրագրի մասնակիցներից մի քանիսը եւ նրանց ղեկավարները:

*«ԻԳործ»-ը հնարավորություն է ընձեռում սփյուռքահայ մասնագետներին աշխատել Հայաստանի կառավարման ոլորտում եւ իրենց նպաստը բերել երկրի զարգացմանը:

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ում շվիի կատարողական արվեստի դասավանդող դասախոսի թափուր տեղի համար:

Դասախոսի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային եւ հարցազրույցի: Մասնակիցների գիտելիքների եւ կարողությունների ստուգումը՝ հարցազրույցը, իրականացվելու է քոլեջի կողմից կազմված հարցատոմսերով:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.դիմում (Ձեւ 1),

2.բարձրագույն մասնագիտական կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3.անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4.աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5.ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,

7.այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.մեկ լուսանկար՝ 3x4 չափի:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունման ժամկետն է 08.09.2022 թ. - 22.09.2022 թ.:

Փաստաթղթերն ընդունվում են բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից 18:00-ն, Ազատության 18 հասցեում:

Հարցազրույցը կանցկացվի 23.09.2022 թ. ժամը 10:00-ին Ազատության 18 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 285320 հեռախոսահամարով:

## ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆՈՂ ԱԶԴԱՆՇԱՆ

Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ աշակողմյան մշտական երթեւեկությամբ խաչմերուկներում տեղադրվում է լուսային լրացուցիչ տեղեկատվական ազդանշան, որը վարորդներին կհուշի այդ պահին միաժամանակ աշխատող հետիոտնի անցումը թույլատրող կանաչ ազդանշանի միանալու մասին:

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ առաջին ազդանշանը տեղադրվել եւ գործարկվել է Ագաթանգեղոս-Գրիգոր Լուսավորիչ փողոցների խաչմերուկում եւ Արշակունյաց պողոտա Ագաթանգեղոսի փողոց հատման վայրում:

«Վարորդների տեսադաշտը երբեմն սահմանափակ է լինում եւ չեն նկատում զուգահեռաբար հետիոտի անցումը թույլատրող ազդանշանի միանալու պահը: Այսուհետ, երբ վառվի հետիոտնի կանաչ ազդանշանը, կմիանա նաեւ այդ մասին վարորդին նախազգուշացնող նոր ազդանշանը: Սա առաջինն է: Երեւանում այդպիսի խաչմերուկների թիվը 27 է, մնացած բոլորում եւս կտեղադրվեն լուսացուցային նոր նշանները»,- նշում է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժ/պ Հայկ Սարգսյանը:

Աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՃՈ հետ համատեղ: Նախաձեռնության գլխավոր նպատակը պատահարների թիվը նվազեցնելն ու անվտանգ երթեւեկություն ապահովելն է:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ

# ՓԼՈՒՋՄԱՆ ՎՏԱՆԳԻ ԱՌՋԵՎ Է

**ՀՀ Արարատի մարզում գտնվող Աղջոց վանքը, որը միջնադարյան Հայաստանի գոհարներից մեկն է, անմխիթար վիճակում է: 13-րդ դարի վանական համալիրը, որն իր վրա է կրել բնության եւ ոտամական դժվար անցյալի բազում հարվածներ, այսօր փլուզման վտանգի առջեւ է կանգնած:**

Խնդիրը օրերս կրկին բարձրաձայնել է հասարակական գործիչ Ջինավոր Մեղրյանը. վերջինս, անդրադառնալով վանական համալիրի ներկայիս վիճակին, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում գրել էր. «Աղջոց վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու մուտքի աջ եւ ձախ կողմերում երկու առաքյալների բարձրաքանդակներն են. հրաշալի պահպանված արվեստի գործ, որն ինձ մտորելու շատ մեծ նյութ տվեց: Երբ կանգնում ես այդ քանդակների առջեւ, տպավորություն է, թե հենց այստեղ է գտնվում Հայաստանի մուտքը՝ հոգեւոր Հայաստանի մուտքը: Այո՛, ավիրված, այո՛, խոնարհված, բայց նաեւ շատ հարուստ, շքեղ, խորիմաստ ու խոստումնալից»:

Ջինավոր Մեղրյանի նախաձեռնությամբ լրագրողների խումբն այցելել է Խոսրովի պետական արգելոցում գտնվող Աղջոց վանք: Ավանդույթի համաձայն՝Աղջոց վանքի կառուցումը եղել է Գրիգոր Լուսավորչի մտահղացումն ու կյանքի է կոչվել նրա նախաձեռնությամբ: Այս վանքը բազմիցս հիշատակվում է Հայսմավուրքներում՝ ծիսամատյաններում, ուր հավաքագրվում եւ ներկայացվում էր սրբերի կյանքն ու նահատակությունը:

Գրիգոր Խլաթեցու հեղինակած Հայսմավուրքում ներկայացվում է, թե երեք քահանաներ, որոնք դարձել էին փախստական, գալիս են Գառնի: Նրանցից մեկը՝ Ստեփանոս քահանան, անցնում է Գառնիի լեռներն ու այնտեղ մեզ անհայտ պատճառներով մահանում: Մյուս քահանան՝ Գրիգորը, այդտեղ կառուցում է վանք՝ ի հիշատակ քահանա Ստեփանոսի, եւ, ըստ ավանդույթի, այդ օրվանից ի վեր վանքը կոչում են Աղջոց: Վանքը հայտնի է եղել նաեւ «Սբ. Ստեփանոս Աղջոց վանք», «Սբ. Ստեփանոս Սբ. Գրիգոր վանք» անուններով:

Աղջոց վանական համալիրը Ջինավոր Մեղրյանի ուշադրության կենտրոնում է հայտնվել վաղուց, երբ արշավական է եղել ու զբաղվել սկաուտական աշխատանքով:

«Վերջին շրջանում անընդհատ գալիս եմ այդ գաղափարին, որ կա կառուցելու եւ կա վերակառուցելու ժամանակ: Անընդհատ մի միտք կար մեջս, որ մեր հայրենիքի համար հիմա մի շրջան է եկել, երբ ժամանակն է դադար վերցնել, մեր ժանգոտած զենքերը վերանորոգել, վերականգնել, վերաիմաստավորել՝եւ՛ հոգեւոր, եւ՛ նյութական, եւ՛ գաղափարական տեսակետից: Մեր հայրենիքի, ժողովրդի համար հիմա մի պահ կանգնելու, մեր հաղթական անցյալը վերաիմաստավորելու եւ այդ անցյալից մեզ հասած ժառանգությունը վերականգնելու ժամանակն է»,- Աղջոց վանական համալիրում լրագրողների հետ զրույցում ասաց Ջինավոր Մեղրյանը:

Հասարակական գործիչն այլընտրանք չի տեսնում. վանական համալիրը պետք է վերականգնվի: Նրա խոսքով՝ իրավունք չունենք կորցնել անցյալից մեզ հասած այս հարուստ պատմական, մշակութային, հոգեւոր ժառանգությունը:

«Ժամանակի հրաշակերտ կառույցին մի հայացք նետելով՝ ակնհայտ է դառնում՝ բարդ ու դժվար աշխատանք է, բայց ցանկության ու ներդրումների դեպքում՝ իրականանալի»,- նկատեց Ջինավոր Մեղրյանը:

ՀՆԱՐԱՎՈՐ Է

# «ԴԱ ՄԵՐ ԲՈՒՀԻՆ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ». Ռ. ՋԱՆԻՆՅԱՆ

**«Կարծում եմ՝ դա մեր բուհին չի վերաբերում, դրա համար ես առայժմ այդ մասին կարծիք չունեմ»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Հյուսիսային համալսարանի ռեկտոր Ռայա Ջանինյանը՝ նշելով, որ, հնարավոր է, Կառավարության նոր նախագիծը մասնավոր բուհերի վրա անդրադարձ չունենա:**

«Մեզ հետ դեռ ոչ մի քննարկում չի եղել, կամ պաշտոնական գրություն չի եկել: Եթե հանրապետությունում բոլորն այն կարծիքին լինեն, որ պետք է տեղափոխվեն Աշտարակ, գուցե մենք էլ այդ կարծիքին լինենք»,-հավելեց մեր զրուցակիցը:

Նշենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտմբերի 1-ի կառավարության նիստում անդրադարձավ ակադեմիական քաղաքի ստեղծման ծրագրերին, որտեղ կտեղափոխվեն հանրապետության բոլոր պետական բուհերը: Կառավարությունը մտադիր է խոշորացնել բուհերը, նպատակ կա ունենալ 8 պետական կոնսոլիդացված բուհ:

Հիշեցնենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ կառավարության հեռահար տեսլականներից է միավորել Հայաստանի Վ. Բրյուսովի անվան պետական, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարաններն ու Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: Նշենք, որ, բացի վերոնշյալ երեք բուհերի միավորումից, կառավարության ավելի վաղ ունեցած տեսլականներից էր նաեւ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի եւ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի միավորումը:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՆԱԽԱՎԵՐՋԻՆ ՏԵՂՈՒՄ Է

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին անդամ Լեւոն Արոնյանը շարունակում է պայքարը Sinquefield Cup-ում: ԱՄՆ-ում անցկացվող այս մրցաշարում կայացել են 4-րդ տուրի պարտիաները: Հայ գրոսմայստերը մրցել է ԱՄՆ ներկայացուցիչ Դոմինգես Պերեսի հետ: Պարտիայի 35-րդ քայլին շախմատիստները համաձայնել են կիսել միավորը: Sinquefield Cup-ի առաջատարը 3 միավորով Հանս Նիմանն է: Երկրորդ տեղում ԱՄՆ ներկայացուցիչ Ուեսլի Սոն է: Լեւոն Արոնյանը նախավերջին տեղում է: Sinquefield Cup-ին մասնակցում են 10 շախմատիստներ: Այն բաղկացած է 9 տուրից, իսկ մրցանակային ֆոնդը կազմում է 1,4 միլիոն ԱՄՆ դոլար:

## ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Հայաստանի հավաքականի խաղացող Ժիրայր Շաղոյանը կարիերան կշարունակի Բուլղարիայում: 21-ամյա եզրային կիսապաշտպանը Երեւանի «Արարատ-Արմենիայից» տեղափոխվեց Սոֆիայի ԲԿՄԱ : Անցած մրցաշրջանը Ժիրայր Շաղոյանը վարձակալությամբ անցկացրել էր Երեւանի ԲԿՄԱ-ում: Transfermarkt-ը Ժիրայր Շաղոյանի տրանսֆերային արժեքը գնահատում է 250 հազար եվրո:

## ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԵՆ

Մադրիդի «Ռեալն» ու կատալոնական «Բարսելոնան» հետաքրքրված են Մոսկվայի «Դինամոյի» եւ Ռուսաստանի հավաքականի կիսապաշտպան Արսեն Զախարյանի ծառայություններով: Ակումբների սկաուտները հետեւում են 19-ամյա ֆուտբոլիստի խաղին եւ ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ կարող են առաջարկ անել «Դինամոյին»: Արսեն Զախարյանի հրաժարագինը 15 միլիոն եվրո է: Լոնդոնի «Չելսին» ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ մտադիր էր ձեռք բերել Զախարյանին, սակայն Ռուսաստանի դեմ պատժամիջոցների հետեւանքով բանկային փոխանցում կատարել չէր կարողացել: Զախարյանը հաստատել էր, որ բանակցել է «Չելսիի» ներկայացուցիչների հետ եւ համաձայնություն տվել տեղափոխությանը: Ռուսաստանի ընթացիկ առաջնությունում Զախարյանը մասնակցել է 7 հանդիպման, խփել 1 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

## ԹԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի ֆրանսիացի գլխավոր մարզիչ Կրիստոֆ Գալտիեն իր ղեկավարած թիմը չի համարում Չեմպիոնների լիգայում հաղթողի գլխավոր հավակնորդ: «Չեմ կարծում, որ ՊՍԺ-ն Չեմպիոնների լիգայի ֆավորիտն է: Մրցակիցներին թերագնահատել չի կարելի է: Ամեն տարի 8 կամ 9 ակումբ հույս ունի նվաճել Չեմպիոնների լիգայի գավաթը, բայց հաճախ նրանք նույնիսկ եզրափակիչ չեն հասնում, քանի որ լինում են անակնկալներ, անհավանական սցենարներ, բայց մենք ունենք հաղթանակի հասնելու ձգտում»,- Գալտիեի խոսքը մեջբերում է Goal.com-ը:

● *Սեպտեմբերի 9-ին «Շանթ» հեռուստաընկերությունում տեղի կունենա «Ռուբեն Հախվերդյան. «Աշնանային էլեգիա»» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ոչ ենթակա, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման դեպքում ակցիզային հարկը ի՞նչ ժամկետում պետք է վճարվի:**

*Հրանտ Մինասյան (31 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ոչ ենթակա, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման գործարքների մասով ակցիզային հարկի վճարման ժամկետները սահմանվում են «Անուղղակի հարկերի մասին» արձանագրությամբ եւ «Անուղղակի հարկերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ակցիզային հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչեւ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք փաստացի ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ):

***ՀՀ հարկային պետական ծառայություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների (բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման ոչ ենթակա, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների) համար օրենքով սահմանված կարգով հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ո՞վ ունի ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնության իրավունք:**

*Դերենիկ Գրիգորյան (48 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնության իրավունք ունի այն ընտանիքը, որի կենսաթոշակառու, ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեցող անձ չհամարվող անդամներից մեկը մահացել է եւ դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք:

***ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է մահվան օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, եւ ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Երեւանում*

Երեկ՝ սեպտեմբերի 6-ին, գրեթե 1 ժամ խցանում էր առաջացել Երեւանի Երվանդ Քոչարի փողոցում, որտեղ բախվել էին Mercedes GLS 450 մակնիշի եւ այլ ավտոմեքենաներ: Վարորդները 1 ժամ է՝ սպասում էին «մեծն ԱՊՊԱ-ին»: Այդ հատվածով անցնելու համար վարորդներից պահանջվում էր 20-25 րոպե:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.09.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: